Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.199

Interdisciplinary approach to the study of the history of the Caucasus region

Susanna Serobyan
https://orcid.org/0009-0005-7552-9851
Assistant at YSU Chair of History of Neighboring Countries of Armenia
susannaserobyan@ysu.am

Keywords: Interdisciplinary, approach, Caucasus, history, time, method, analysis, data, research, local, region, knowledge, perspective.

In the past century and at the beginning of the 21st century, new disciplines were formed in historical science, conditioned by the use of new research approaches, principles and methods. The combination of the latest scientific approaches ensures the comprehensiveness of historical studies, creating an opportunity to study the past of societies from different perspectives and predict the future. In the article, the author discusses the necessity of applying an interdisciplinary approach to the study of local history, using the example of the Caucasian region. The author concludes that, at the present stage, a complex, in-depth, objective, and comprehensive study of the history of the Caucasus is impossible without an interdisciplinary understanding of historical events and phenomena. Only through such an approach is it possible to obtain objective scientific results, expand the boundaries of historical cognition, and form a complete and generalized scientific understanding of the Caucasian region's role in world civilization.

Միջգիտակարգային մոտեցումը կովկասյան տարածաշրջանի պատմության հետազոտման մեջ

Սուսաննա Սերոբյան
ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ասիստենտ, մեթոդիստ – մանկավարժ

Հիմնաբառեր՝ Միջգիտակարգային, մոտեցում, Կովկաս, պատմություն, ժամանակ, մեթոդ, վերլուծություն, տվյալ, հետազոտություն, լոկալ, տարածաշրջան, ճանաչողություն, հեռանկար:

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 199-207

Received: 15.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 18.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Interdisciplinary approach to the study of the history of the Caucasus region

Միջգիտակարգային մոտեցումը կովկասյան տարածաշրջանի պատմության հետազոտման մեջ

Անցած հարյուրամյակում և 21-րդ դարասկզբին պատմագիտության մեջ ձևավորվեցին նոր կրթանքներ՝ պայմանավորված հետազոտական նոր մոտեցումների, սկզբունքների և մեթոդների կիրառմամբ: Նորագույն գիտական մոտեցումների համակցումն ապահովում է պատմական ուսումնասիրությունների համակողմանիությունը՝ հնարավորություն ստեղծելով տարբեր տեսանկյուններից ուսումնասիրելու հասարակությունների անցյալը և կանխատեսելու ապագան: Հոդվածում հեղինակը քննարկում է միջգիտակարգային մոտեցման կիրառման անհրաժեշտությունը տեղային [լոկալ] պատմության հետազոտման մեջ՝ կովկասյան տարածաշրջանի օրինակով և եզրակացնում, որ արդի փուլում կովկասյան տարածաշրջանի պատմության համալիր, խորքային, առարկայական, համակողմանի ուսումնասիրությունն անհնար է առանց պատմական իրադարձությունների ու երևույթների միջգիտակարգային ըմբռնման, քանի որ միայն այս մոտեցմամբ է հնարավոր ձեռք բերել օբյեկտիվ գիտական արդյունք և ընդլայնել պատմական ճանաչողության սահմանները, և միայն այդ պարագայում է ձևավորվում ամբողջական–ընդհանրացնող գիտական պատկերացումը համաշխարհային քաղաքակրթությունում կովկասյան տարածաշրջանի դերակատարման խնդրի շուրջ:

Междисциплинарный подход к изучению истории Кавказского региона

Сусанна Серобян

Ассистент кафедры истории сопредельных стран Армении ЕГУ

Ключевые слова: Междисциплинарный, подход, Кавказ, история, время, метод, анализ, данные, исследование, локальная, регион, познание, перспектива.

В прошлом веке и в начале XXI века в исторической науке сформировались новые дисциплины, обусловленные использованием новых исследовательских подходов, принципов и методов. Сочетание новейших научных подходов обеспечивает комплексность исторических исследований, создавая возможность изучать прошлое обществ с разных точек зрения и прогнозировать будущее.

В статье автор рассматривает вопрос о необходимости применения междисциплинарного подхода при изучении местной / локальной/ истории на примере кавказского региона и приходит к выводу, что на современном этапе комплексное, глубокое, объективное и всестороннее изучение истории Кавказа невозможно без междисциплинарного осмысления исторических событий и явлений, поскольку только при таком подходе возможно получение объективного научного результата и расширение границ исторического познания, и только в этом случае формируется полное и обобщающее научное понимание роли кавказского региона в мировой цивилизации.

* * *

Ներածություն: Անցած հարյուրամյակում և 21-րդ դարասկզբին պատմագիտությունը ընդլայնեց իր բովանդակային ընդգրկման շրջանակները, վերափոխման ենթարկվեց նաև նրա հետազոտման առարկան՝ ընդգրկելով հետազոտական նոր ոլորտներ, ուղղություններ: Պատմագիտության մեջ

ձևավորվեցին նոր կրթանքներ՝ պայմանավորված հետազոտական նոր մոտեցումների, սկզբունքների և մեթոդների կիրառմամբ: Արդի փուլում պատմագիտության գիտական մոտեցումները արտացոլում են ինչպես փիլիսոփայական, այնպես էլ մեթոդաբանական փոփոխությունները: Յուրաքանչյուր գիտական մոտեցում [դիալեկտիկական-մատերիալիստական, կառուցվածքային, հետգաղութատիրական, ազգագրական – մշակութային և այլն] ընկած է ժամանակակից պատմագիտության հիմքում և ունի իր առանձնահատկությունները, սակայն դրանց համակցումն ապահովում է պատմական ուսումնասիրությունների համակողմանիությունը՝ հնարավորություն ստեղծելով տարբեր տեսանկյուններից ուսումնասիրելու հասարակությունների անցյալը և կանխատեսելու ապառնին:

Պատմության հետազոտման և կառուզատիվ կամ խրոնոգրաֆիկ շարադրման հիմքում ընկած են պատմական փաստերը, որոնք դեռևս 19-րդ դարավերջին գերմանացի պատմաբան Է. Բերնհայմը որակեց որպես սկզբնաղբյուրներից քաղած վկայություններ, տվյալներ [Бернгеим, տե՛ս նաև Филюшкина, 2018]: Վերջիններս արհեստավարժ պատմագետը վերածում է պատմական տեքստի՝ իրականացնելով սկզբնաղբյուրներում առկա տեղեկույթի տարանջատում մասերի և դրանց համակողմանի վերլուծություն, ապա՝ այդ բաղադրիչների իմաստների համադրում, ամբողջացում [Ստեփանյան, 2014]: Սկզբնաղբյուրի հետհայեցողական կամ հեռանկարային վերլուծության ճանապարհով պատմագետի կողմից հաստատվում է պատմական ժամանակների կապը: Պատմագետն իր հետազոտությունները կառուցակազմում է գիտական տարբեր մոտեցումների կիրառմամբ, որոնք ենթադրում են հայացքների, գիտական սկզբունքների, մեթոդների և մեթոդական հնարների ամբողջություն: Ընդհանրապես «գիտական մոտեցում» եզրույթը օգտագործվում է գիտական գործունեության ընդհանուր ուղղություն նշանակությամբ, որի հիմամբ իրացվում է հետազոտողի նպատակադրումը: Գիտական մոտեցումները յուրօրինակ են, բայց նաև փոխկապակցված են ու անքակտելի, դինամիկ են ու հարափոփոխ, որովհետև ոչ մի տվյալ չի կարող ընկալվել որպես հավիտենական, որովհետև գիտությունը գիտություն է այնքանով, որքանով որ նրա տվյալները այս կամ այն ժամանակում կարող են հերքվել կամ վերահաստատվել [Филюшкина, 2018]: Գիտական մոտեցումների փոխազդեցությամբ պայմանավորվում է հետազոտվող օբյեկտի համալիր ուսումնասիրությունը: Գիտական մոտեցումները անհավանականորեն կարևոր են նաև պատմագետի գործունեությունում, մանավանդ, որ շատ անգամ մենք չենք կարող փորձարկել, դիտել երևույթները, որոնք եղել են վաղ անցյալում, չնայած այժմ գոյություն ունի պատմության վերակառուցումը, երբ ստեղծվում է թատերայնացված միջավայր, և վերականգնվում են անցյալի դետալները՝ սկսած ժամանակին բնորոշ հագուստից, տներից և այլն: Սակայն սա միշտ չէ, որ գիտական հետազոտության համար կարող է արդյունավետ գտնվել: Մինչդեռ այս կամ այն գիտական մոտեցման կամ դրանց մի քանիսի միաժամանակյա կիրառումը կարող է մեծ տվյալներ տրամադրելով առավել համապարփակ վերլուծություն անելու հնարավորություն ստեղծել: Պատմագիտության մեջ գիտական մոտեցումների յուրօրինակությունը այն է, որ դրանք վերջնարդյունքում ձևավորում են պատմական մտածողություն, ընդլայնում են պատմագիտության իմաստային ընդգրկման շրջանակները: Գիտական մոտեցումները կարևոր են պատմագետի գործիքակազմում, սակայն դրանց սկզբունքների և մեթոդների ոչ ճիշտ կիրառման դեպքում կարող են ավելի շատ վնաս հասցնել, քան արդյունավետ գտնվել: Օրինակ , սոցիալ – մշակութային մոտեցման կիրառման

ժամանակ շատ անգամ տեղի է ունենում օտարի մշակութային – պատմական արժեքների միտումնավոր յուրացում, ցեղային խմբի արժեքաստեղծ գործունեության ժխտում, մի շարք գործոնների միտումնավոր անտեսում, պատճառահետևանքային կապերի ձևախեղում:

Անշուշտ, պատմագետի համար ցանկացած գիտական մոտեցման պարագայում առանձնահատուկ արժեքավոր են պատմական տվյալները, քանի որ նրանց վերլուծությամբ միայն կարելի է ընկալել հարափոփոխ աշխարհը, մշակել ապագայի ռազմավարությունը և հանրույթի զարգացման միտումները: Պատմական տվյալների դիտարկումը, դասակարգումը, տիպաբանումը և մեկնությունը պատմագիտությունը վերածում են մեկնողական միջավայրի: Սակայն գաղտնիք չէ, որ պատմական տվյալները հաճախ ներկայանում են խեղաթյուրված կամ ունենում են սահմանափակ և ոչ բավարար կիրառում և ոչ միշտ են բնորոշում իրավիճակը: Նման պարագայում պատմագիտությունը՝ իբրև իդիոգրաֆիկ, նաև մարդակենտրոն գիտություն, դրսևորում է այլ գիտությունների տվյալներն օգտագործելու անսահմանափակ հնարավորություն. նրա սեփական հետազոտական մեթոդները զուգակցվում են այլ գիտությունների հետազոտական մեթոդներին, ինչն էլ հիմք է ստեղծում պատմական հետազոտություններում միջգիտակարգային մոտեցման ձևավորման ու կիրառման: Արդի փուլում միջգիտակարգային հետազոտությունները օրավուր արժևորվում են, քանի որ գիտությունները կոչված են լուծելու գլոբալ հիմնախնդիրներ: Միջկրթանքային հետազոտությունները դասակարգվում են հետևյալ կերպ՝ բազմակրթանքային (մուլտիդիսցիպլինար), միջկրթանքային (ինտերդիսցիպլինար) և վերկրթանքային (տրանսդիսցիպլինար): Սրանցից առաջինի դեպքում հետազոտվում են հիմնախնդրի տարբեր դիտանկյուններն առանձին – առանձին, ապա տեղի է ունենում դրանց միասնականացումն ու ամբողջական պատկերի ստեղծումը: Երկրորդի պարագայում ձևավորվում է ընդհանուր «հետազոտական դաշտ»՝ հետազոտողների միասնական խմբով, սակայն խմբի յուրաքանչյուր անդամը կիրառում է այն գիտության մեթոդը, որի ներկայացուցիչն է, իսկ վերկրթանքային հետազոտությունները ենթադրում են գիտությունների և նրանց մեթոդների ինտեգրման բարձր մակարդակ և հիմնախնդրի հետազոտման համալիր մեթոդաբանություն [Филюшкина, 2018, 104-105]:

Հարկ է նշել, սակայն, որ միջգիտակարգային հումանիտար հետազոտություններում պատմական տվյալները, այնուամենայնիվ, համարվում են առաջնային, որովհետև.

- սահմանում են նմանատիպ հետազոտությունների եզրութաբանական ապարատն ու համատեքստը՝ ապահովելով տարբեր ոլորտի գիտնականների արդյունավետ համագործակցությունը,
- ապահովում են գիտական հետազոտությունների երկարատև հեռանկարը, ինչը չափազանց կարևոր է ապագայի կանխատեսման համար,
- որոշում են միջգիտակարգային հետազոտությունների ուղղվածությունն ու նպատակայնությունը,
- ընդգծում են պատմական տարբեր ժամանակներում սոցիալ – մշակութային գործոնների [օրինակ՝ նախապաշարմունքների] ազդեցությունը գիտական մտքի վրա, ինչն էլ իր հերթին ապահովում է հետազոտության արդյունավետությունն ու համակողմանիությունը:

Հետևապես թյուր և պատրանքային է այն մտայնությունը, թե պատմական գիտությունը բոլոր մյուս գիտություններից ակնհայտորեն ազդակներ է ստանում, մինչդեռ չի դրսևորվում նրա անալոգ դերակատարումն ու նշանակությունը մյուս գիտությունների համար [Про, 140]: Իրականում միջգիտակարգային մոտեցման կիրառմամբ մի կողմից, կարծես իրենց դասական իմաստով տարալուծվում են պատմագիտական հետազոտությունների շրջանակները, սակայն մյուս կողմից էլ պատմական գիտությունը նոր որակական աստիճանի է հասնում՝ արձանագրելով պատմական ճանաչողության նոր՝ առավել բարձր մակարդակ: Այս իմաստով էլ միջգիտակարգային մոտեցումը առանձնահատուկ նշանակություն ունի ինչպես տոտալ, այնպես էլ գլոբալ և լոկալ պատմության հետազոտման ու շարադրման ժամանակ:

Փորձենք վերոգրյալը մասնավորեցնել և քննարկել կովկասյան՝ իբրև տարածաշրջանային պատմության պարագայում. Կովկասի պատմության ո՞ր դիտանկյունների խոր և համակողմանի քննարկումն ու առարկայական վերլուծությունն է պայմանավորում միջգիտակարգային մոտեցման առաջնահերթությունը:

Կովկասի ռազմավարական դիրքն ու աշխարհաքաղաքական դերակատարումը, բազմէթնիկությունն ու բազմամշակութայնությունը, նրա՝ հակասություններով ու համագործակցությամբ լի անցյալը պայմանավորել են տարածաշրջանի յուրօրինակությունը: Կովկասի հարուստ և հետաքրքիր, զիգզագներով, վերելքներով ու վայրէջքներով պատմության հետազոտումը պատմագիտության կարևոր ոլորտ է՝ պարառող հետազոտական մեթոդաբանական - մասնագիտական այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են միջգիտակարգային, բազմամշակութային, կառուցվածքային (սոցիալ – տնտեսական և աշխարհագրական, գենդերային) և այլ մոտեցումները, որոնց համակցված կիրառումն ապահովում է պատմական վերլուծության բազմակողմանիությունն ու օբյեկտիվությունը: Այս գիտական մոտեցումները իրենց հերթին պարառում են հետազոտական սկզբունքներ, մեթոդներ և մեթոդական հնարներ, որոնց ամբողջությունը ելակետային է հետազոտողի համար: Կովկասի պատմության հետազոտման մեջ գիտական մոտեցումները ապահովում են պատմական փաստերի առարկայական կառուցակազմման և հիմնավորման գիտական գործընթացը, որն առհասարակ ենթադրում է դիտարկում, հիպոթեզի առաջքաշում, փորձի կիրառում և, վերջապես, արդյունքների վերլուծություն [Потемкина, 2011, 14-18]: Գիտական մոտեցումները հնարավորություն են ստեղծում արտահայտելու և քննարկելու տարբեր, երբեմն հակասական տեսակետներ և ձևավորելու պատմական մտածողություն [Ստրադլինգ, 2008, 9]: Տարբեր գիտակարգերի ներդրումն ու միջգիտակարգային մոտեցման կիրառումը պայմանավորված են կովկասյան տարածաշրջանում ծավալված պատմաքաղաքական բազմակերպ ու բազմաշերտ իրողություններով և հիմնավորվում են վերջիններիս համալիր ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Սակայն անցյալում ծավալված պատմական գործընթացների բազմակերպությունը միջգիտակարգային մոտեցման կիրառման միակ դիտանկյունը չէ: Կովկասի պատմության հետազոտման մեջ միջգիտակարգային ըմբռնումը նպատակաուղղված է ոչ միայն անցյալի լուսաբանմանը, այլև՝ նրա ապագայի կանխատեսմանը: Բնականաբար, ապառնիի կառուցակազմումը եղել և մնում է շատ բարդ խնդիր, մանավանդ, որ գիտություններից յուրաքանչյուրը՝ ազգագրությունը, մարդաբանությունը, լեզվաբանությունը, հնագիտությունը, քաղաքագիտությունը և այլն, ունի իր ուսումնասիրության կոնկրետ առարկան և առաջարկում է

հետազոտությունների յուրօրինակ մեթոդաբանություն և հեռանկար: Օրինակ՝ հնագիտությունը տվյալներ է հաղորդում նյութական մշակույթի և հին հասարակությունների առօրեայի մասին, լեզվաբանությունը՝ լեզուների էվոլյուցիայի ու դասակարգման, քաղաքագիտությունը՝ իշխանական կառույցների և հակամարտությունների լուծման ռազմավարության վերաբերյալ, ազգագրությունը՝ մարդկանց պատմականորեն ձևավորված ընդհանրությունների կառուցվածքի ու ավանդույթների, սոցիոլոգիան՝ սոցիալական հարաբերությունների և ինստիտուտների և այլն: Եվ այս պարագայում դժվարանում է հետազոտվող օբյեկտի նկատմամբ համալիր մոտեցման մշակումը, իսկ ապագայի կառուցակազմումը վերածվում է իսկական մարտահրավերի: Այնուամենայնիվ, Կովկասի պատմության հետազոտությունում՝ պայմանավորված լեզվամշակութային, աշխարհագրական, կրոնաքաղաքական, ցեղային և այլ գործոններով, միայն տարբեր գիտակարգերի մեթոդների համադրմամբ է հնարավոր դառնում տարածաշրջանի պատմական գործընթացների մասին համակողմանի գիտական պատկերացման ձևավորումը. «Կովկասի պատմության ուսումնասիրությունը պահանջում է ոչ միայն դասական պատմագիտական մեթոդներ, այլև այլ գիտակարգերի ներգրավում ՝ պատմական գործընթացների ամբողջական պատկերն ընկալելու համար», -իրավամբ նշել է Մ. Ալեքսեևը [Алексеев, 2008, 7]: Իսկ ապագայի կանխատեսման նպատակով Ջ. Քիսթի կողմից առաջարկվում է կիրառել համադրման և համեմատական վերլուծության մեթոդները՝ այսինքն պատմական իրադարձությունների վերլուծության ժամանակ լուսաբանել տարբեր գործոնների, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցության ազդեցությունը, նաև՝ համեմատել տարբեր ժամանակաշրջաններում կրոնական ուղղությունների ազդեցությունը տարածաշրջանում ծավալվող գործընթացների վրա [Քիսթ, 2007, 65]:

Պատմական գործընթացների միակողմանի վերլուծություններից խուսափելու և ապագան կանխատեսելու մյուս ուղին ոչ միայն տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած գործընթացների զուգահեռ ուսումնասիրությունն է, այլ նաև ժողովուրդների փոխհարաբերությունների հիմնահարցի լուսաբանումը՝ տեղական, արևելյան, եվրոպական և այլ աղբյուրների աղբյուրագիտական մեկնությամբ և քննադատությամբ, կրկին դրանց համեմատումով, համադրմամբ, որովհետև միայն այդ կերպ կարելի է ըմբռնել տարածաշրջանում ծավալված և ընթացող պատմական գործընթացների փոխկապակցվածությունն ու փոխազդեցությունը:

Միջգիտակարգային մոտեցումը կարող է նպաստել նաև պատմական գիտությունում նոր նարատիվների ձևավորմանը: Օրինակ, Կովկասի պատմության հետազոտումը ֆեմինիստական տեսանկյունից կարող է ընդգծել կնոջ դերակատարումը տարածաշրջանի պատմական գործընթացներում և մարտահրավեր նետել Կովկասի պատմության շարադրման արականության հարացույցին: Հետազոտական նոր ոլորտ և նարատիվ կարող է դառնալ Կովկասի էկոլոգիական պատմության հետազոտումը՝ կարևորելով մարդու գործունեությունն ու ազդեցությունը բնական լանդշաֆտի վրա [Потемкина, 2011, 59-61]:

Հաջորդ դիտանկյունը, որն անհրաժեշտություն է դարձնում Կովկասի պատմության հետազոտման մեջ միջգիտակարգային համագործակցությունը, կովկասյան քաղաքակրթության՝ իբրև կովկասագիտական հարացույցի, համակողմանի քննարկման խնդիրն է, որն առաջնահերթ

պահանջում է մշակութաբանական վերլուծություն: Լինելով տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկ, կովկասյան տարածաշրջանի պատմական զարգացումը շատ անգամ եղել է մշակութային փոխազդեցությունների արգասիք: Կովկասյան ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները հաճախ որոշիչ են եղել նրանց սոցիալ – քաղաքական զարգացումների համար: Անշուշտ, ինչպես նշում է Ջ. Քիսթը, մշակութային փոխներգործությունը առանցքային դերակատարում է ունեցել կովկասյան սոցիալական համակեցությունում [Քիսթ, 2011, 68]: Հետևապես առանց մշակութաբանական մոտեցման, առանց պատմության ընկալման՝ իբրև մարդկանց արժեքաստեղծ գործունեության, անհնար է ազգային ինքնության, մշակութային առանձնահատկությունների և ժառանգության, սոցիալ – քաղաքական գործընթացների վրա քրիստոնեական և իսլամական մշակույթների ազդեցության, միգրացիոն գործընթացների, սոցիալական կառուցվածքի փոփոխությունների, միջպետական հարաբերությունների և այլ կարևոր հիմնահարցերի համակողմանի լուսաբանումը:Կովկասյան տարածաշրջանի հարուստ մշակութային ժառանգության հետազոտման մեջ կարևոր դերակատարում ունեն արվեստի պատմության, մշակութային մարդաբանության, սոցիոլոգիայի, մշակութաբանության և այլ գիտությունների տվյալները, որոնք օգնում են բացահայտել, թե ինչպես են Կովկասում մշակույթն ու արվեստը պայմանավորել տարածաշրջանի սոցիալ – տնտեսական և քաղաքական փոփոխությունները: Օրինակ, 19-20-րդ դարերի սահմանագծին նավթարդյունաբերության զարգացումը հանգեցրեց պերճանքի առարկաների առևտրով զբաղվող հարուստ վաճառականության դասի ձևավորմանը, իսկ հետխորհրդային շրջանում զբոսաշրջությունը նպաստեց ավանդական դեկորատիվ – կիրառական արվեստի նմուշների արտադրությանն ու մարկետինգին: Արվեստն ու միջմշակութային հաղորդակցությունն իրենց հերթին նպաստում են ժողովուրդների միջև կապերի, փոխըմբռնման և հաղորդակցության հաստատմանը:

Հարկ ենք համարում նշել, որ մշակութային փոխներգործության խնդրի լուսաբանումն անհնար է առանց պատմագիտական կրթանքի՝ պատմական իմագոլոգիայի տվյալների, որի հետազոտման օբյեկտը ժողովուրդների մշակույթներում կերպարների և խորհրդանիշների հետազոտությունն է, «ազգային կերպար », «ազգային կարծրատիպ» հասկացություններն են, որոնցով պատմական տարբեր ժամանակներում ներկայացվում են ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները: Պատմական իմագոլոգիան ուսումնասիրում է ազգային մշակույթներում «օտարի » և «յուրայինի» հարաբերակցությունը, լուսաբանում է այն խնդիրը, թե ինչպես է տարածաշրջանում դարեր շարունակ ընթացել միջմշակութային հաղորդակցությունն ու մշակութային փոխներգործությունը [Потемкина, 2011, 70-75]:

Կովկասյան տարածաշրջանի պատմության միջկրթանքային հետազոտություններում կարևոր դերակատարում ունի նաև պատմական նոր գիտաճյուղը՝ Նոր քաղաքական պատմությունը, որի հետազոտման օբյեկտը իշխանության և նրա խորհրդանիշների ֆենոմենն է, տեղական իշխանությունների և կենտրոնի (մետրոպոլիայի) փոխհարաբերություններն են, նաև՝ ազգային ինքնության հիմնախնդիրը [Потемкина, 2011, 41-43]: Նոր քաղաքական պատմության ձևավորումով գիտնականները սկսեցին հետազոտել քաղաքական իշխանության սոցիալ – մշակութային դիտանկյունները, և ընդգծվեց, որ քաղաքական էլիտաների հիմնախնդիրը հատկապես սուր է դրսևորվել կովկասյան տարածաշրջանում, ուր մշտապես պայքար է ընթացել քաղաքական իշխանության համար, և մշտապես արտաքին ուժերը տարածաշրջանի

կառավարման նպատակով հենվել են տեղական իշխանական էլիտայի վրա, վերջիններիս պարգևատրել են իրենց լոյալության կամ հնազանդության համար: Իսկ այս վերջին հանգամանքն էլ իր հերթին տարածաշրջանում պայմանավորել է անհավասարության և կոռուպցիայի աճը. տեղական չինովնիկները արտաքին ուժերի հովանավորությունն օգտագործել են սեփական հարստացման նպատակով: Փաստորեն, արտաքին ուժերի հովանավորությամբ Կովկասում տեղի է ունեցել կլանային և ազգակցական իշխանական վերնախավի ձևավորում: Առանձին իշխանական խմբեր և էլիտաներ ընկալվել և ընկալվում են որպես արտաքին ուժերի գործակալներ, այլ ոչ թե որպես սեփական հանրույթի շահերի ներկայացուցիչներ [Гаджиев, 2003, 112-120]:

Կովկասյան տարածաշրջանի պատմության հետազոտությունում միջկրթանքային մոտեցման կիրառման մյուս կարևոր դիտանկյունն այն է, որ կովկասյան տարածաշրջանի վերաբերյալ պատմական տվյալները, թվում է, բազմաթիվ են, սակայն դրանք հաճախ հատվածական են, շատ անգամ ցաքուցրիվ և ոչ ամբողջական: Բացի այդ, տարածքի լեզվամշակութային ժառանգության խայտաբղետությունը հանգեցրել է դրանց վերծանման և մեկնության բարդ խնդրին, որը պահանջում է հատուկ հմտություններ, և որպեսզի այդ խնդիրը լուծել, պետք է հենվել այլ գիտությունների կողմից տրամադրվող աղբյուրների ու տվյալների վրա՝ հնագիտական արտեֆակտների, ժողովրդական բանահյուսության, ազգագրական դաշտային հետազոտությունների տվյալների և այլն, որովհետև հնագիտական արտեֆակտները, օրինակ, բացահայտում են հին հասարակությունների նյութական մշակույթի և տեխնոլոգիական նվաճումները, բանահյուսությունը հանրույթի մշակութային – կրոնական պատկերացումներն ու ողջ բարոյական ու բարոյագիտական արժեհամակարգն է վերհանում, ազգագրությունը մատնանշում է տարածաշրջանի պատմական զարգացումը՝ պայմանավորված բնակչության էթնիկ կազմով, ավանդույթներով և այլ գործոններով և այլն:

Հաջորդ դիտանկյունը. Միջգիտակարգային մոտեցումը հատկապես օգտակար է և կիրառելի կովկասյան տարածաշրջանի ոչ վաղ անցյալի հետազոտման համար: Ժամանակակից փուլում Կովկասը ներկայանում է իբրև կրոնաքաղաքական և միջէթնիկ տարաձայնություններով ու հակամարտություններով վիճելի տարածք: Նրա նոր և նորագույն պատմության առանցքային իրողություններ հանդիսացող ազգամիջյան հակամարտությունների պատճառահետևանքային տրամաբանությունը ընկալելու տեսանկյունից չափազանց կարևորվում է միջգիտակարգային մոտեցումը: Գաղտնիք չէ, որ Կովկասի պատմության էական հիմնախնդիրներից է պատմական իրողությունների քաղաքականացումը և օտարի պատմության յուրացումը՝ տարբեր ուժերի շահերով և ներհակություններով պայմանավորված: Կովկասյան տարածաշրջանային հակամարտությունների հիմքում ընկած են տարբեր նարատիվներ. օրինակ , արմատապես տարբեր են Արցախյան հիմնախնդրում հայկական և ադրբեջանական նարատիվները՝ երկու ժողովուրդների մշակութային և քաղաքական տարբերություններն ընդգծող [Шнирельман, 2003, 194-195]: Միջգիտակարգային մոտեցումը գիտնականներին հնարավորություն է ընձեռում հակամարտությունների լուծման ուղիներ որոնել և ընկալել պատմական իրադարձությունների առանձնահատկություններն ու բարդությունները, նպաստել բալանսավորված և առարկայական որոշումների կայացմանը:Սակայն այստեղ պետք է դրսևորել իրատեսություն և նշել, որ, ցավոք,

գիտության մշակները միշտ չէ, որ կարևորում ու առաջնային են համարում գիտական խիղճը և հարգանքը մարդու իրավունքների ու ազատությունների հանդեպ: Այս իմաստով էլ միջգիտակարգային մոտեցման կիրառումը զերծ չէ խնդիրներից. պահանջվում է տարբեր ոլորտների գիտնականների անաչառ համագործակցություն, անհրաժեշտ է դուրս գալ սեփական կրթանքի և սեփական շահերի շրջանակներից, ինչը հեշտ չէ նաև լեզվական և տեսամեթոդաբանական տարբերությունների տեսանկյունից: Անհրաժեշտ է նաև միջկրթանքային նախնական կրթություն, որը, սակայն, չի ապահովվում ավանդական ակադեմիական ծրագրերում:Այս խնդիրների լուծման համար կարևորվում է մշտական միջգիտակարգային կենտրոնների և ծրագրերի ստեղծումը, ինչը կարող է Կովկասի պատմության բազմաշերտ հետազոտման իրական հիմք դառնալ:

Եզրակացություն*:* Կովկասյան տարածաշրջանի պատմության հետազոտման մեջ միջգիտակարգային մոտեցումը, պատմագիտության մեթոդներին տարբեր գիտակարգերի սկզբունքների ու մեթոդների զուգորդումը ժամանակի պահանջ է և անհրաժեշտություն, որովհետև միայն այդ պարագայում է հնարավորություն ստեղծվում համակողմանիորեն և առարկայորեն վերլուծելու և արժևորելու պատմամշակութային գործընթացները և կառուցակազմելու դրանց հեռանկարը: Միջգիտակարգային մոտեցումը պատմագետ – հետազոտողներին հնարավորություն է ընձեռում նոր լույսի ներքո հանգամանորեն վերլուծելու և վերհանելու տարածաշրջանի պատմության ինքնատիպությունը և ձևավորելու պատմական ճանաչողության առավել բարձր մակարդակ: Պատմական հետազոտություններում միջգիտակարգային մոտեցումը կարևոր է և այժմեական, որովհետև միայն այդ պարագայում է ձևավորվում ամբողջական – ընդհանրացնող գիտական պատկերացումը համաշխարհային քաղաքակրթությունում կովկասյան տարածաշրջանի դերակատարման խնդրի շուրջ:

Գրականություն ցանկ

Step'anyan A., Tartam ants'yalakanut'yunits' depi patmut'yun, Tek'st, patum, meknut'yun, «VEm», t'iv 1. Ye., 2014:

Stradling RR., Patmut'yan dasavandman bazmatesankyun motets'umy, Ye., 2008:

K'ist' J., Kronakan bazmazanut'yun yev mijmshakut'ayin haghordakts'ut'yun, Ye., 2007:

Alekseyev M., Ocherki istorii otechestvennogo kavkazovedeniya, M., 2008.

Berngeim E., Vvedeniye v istoricheskuyu nauku, M., 2011.

Gadzhiyev K., Geopolitika Kavkaza, M., 2003.

Potemkina M., Teoriya i metodologiya istorii, M., 2011.

Pro A., Dvenadtsat' urokov po istorii, M., 2000.

Teoriya i metodologiya istorii, pod red. A.I.Filyushkina, M., 2018.

Shnirel'man V., Voyny pamyati. Mify, identichnost' i politika v Zakavkaz'ye, M., 2003.